

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳԱՆՏԻՐԷ, Ապրիլի փոփոյ

ՄՈՒԳԱԹԱՄԻ ճիշդ պիտի

Pour les annonces s'adresser
à la Rédaction du Journal PHAROS
LE CAIRE -- RUE ABDIN
vis-à-vis du «Mokattam»

ԾԱՆՈՒԹՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՄ

Մէկ անգամի համար տողը 3 շաբ. ողջ.
Մէկ անգամի տեղի ծանուցումներու համար
մասնաւոր պայմաններ:

ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՆՈՒՄ

ԵԳԻՊՏՈՒ ՇԱԲԱԹ

Տարեկան 2.00 100
Վեցամսեայ » 55
Եռամսեայ » 30


ՕՏԻՐ ԵՐԿՐԱՆԵՐՈՒ ՇԱԲԱԹ

Տարեկան 3.00 26
Վեցամսեայ » 14

ԵՏ ԶԻ ՏՐՈՒՐ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՈՒՂՋՈՒՄ

ՈՒՂՋ ԵՎ ԳՐՈՒԹԻՒՆ



ՓԱՐՈՍ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ՄԱՅԻՐ ԱՅԻՆ, ԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՆՈՒՄ

ԿՐ ԶՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԵՐԵՎԱՆԻ, ՆԻՆՅԱՆԻ ԵՎ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Տնօրէն Խմբագիր Յ. ԱՆՓԻԱՐ

Ք Ր Օ Ն Ի Կ

Մենք ու պարսիկ, գերն ու նիհար, Լա-
ղեքանդիկացին և Գահիրեցին, սահմանա-
դրականը և հակասահմանադրականը, հաս-
կեցողը և թողիկն ի վեր՝ չի հասկցողը, ա-
նոնք որ կին են և միաները որ տակաւին
չեն կրցած ըլլալ, տեղացին և . . . զայն-
թակղակաւնը, վաշխառուն և հասառուն, Լզն
ու արուն, վարժուհին պաշտպանողները և հո-
գաբարձութիւնը այսպանողները, նախկին Լե-
ւոն եօթներորդը և Լեւոն . . . Մկրտիչները,
մեր պաշտօնակիցները և մեզի կից տուող-
ները, ճշմարիտ դրագէտները և ամբարիշտ
գրողները, տիրացուն և հարսնացուն, հա-
րուստը և այն որ չէ, ասոնք ա-
մենքն ալ, որ այս տողերս կարգաւոր պա-
տիւր կ'ընեն ինծի, որքան յուսախաբ պի-
տի ըլլան արդեօք երբ փոխանակ ուսուցիկ
խմբագրականի մը, սա պարզ քրօնիկը գրու-
նեն թերթին առջի սիւնակին մէջ, սիւնակ
մը՝ որ ուրիշներ սովորութիւն ըրած են
իրենց ազգասիրական մաղձը թափել շա-
բաթը երկու անգամ:

— Սա վարժուհին վրայ բան մը գրէ՛,
կը խրատէ մէկը:

— Ուրիշներ պէտք ունենան մը չու-
նիս, կը հարցնէ ուրիշ մը:

— Աղբար, ինչուդ պէտք, դուն կ'են-
կնիկներուն պոչէն բռնէ, կը յանձնարարէ
շնացող ծերունի մը:

Եթէ ամբողջ ըստածները, յանձնարար-
ուածները և թելադրուածները մէջտեղ դնել
հարկ ըլլար, մեր տպարանի գումարները
— որոնք ձեր գիտցած գումարներէն սա
տարբերութիւնը ունին որ, որքան շատ ծակ
ունենան այնքան յարգի են — այդ գումար-
ներուն մէջ, կ'ըսեմ, տասը բունթօ գիր
չէր մնար, հակառակ ահադին քանակաւ-
թեամբ տասը բունթօ գիր ունենալու:

— Ի՞նչ, տպարանին աւելցած կ'ընե՞ս կոր,
կը հարցնէ ինծի:

Ծնորդ ըրէք, ըսեմ. ասիկայ գէշ ուղի-
թութիւն մըն է որ վրաս մնաց. . . ապահո-
վագրական գործերու մէջ մտնելն ի վեր:

Պրանտայիք որքան իրաւունք ունին երբ
կ'ըսեն թէ՛ On ne peut pas contenter
tout le monde et son père:

Ասոնք նորէն բան մը ըսելու երկայնք
ունին, հապա ս'որ դնելը այնպիսիները,
որոնք՝ գերազարագէտ ապուշ, կը պահանջեն
որ թերթ մը անպատճառ իրենց սիրած
նիւթերով լեցուն ըլլայ:

— Պազի, պազի կրօնական յօդուած-
ներ ալ չի մոռնալ դնելու, կը փոփոխա-
րանջս ի վար, անցեալ օր, մէկը՝ որ ա-
միսը 3 դրուշէն պակաս տոկոս չառնէր
ուսիկ գլուխ, ամբարտաւան:

Ես ալ յանցաւոր եմ, գիտեմ:
Գաղի եկայ, ամենէն գէշ սէզօնը ընտ-
րեցի «Փարոս»ը վերստին հրատարակելու
համար:

Ի՞նչ փոթորկալից օգով ճամբայ կ'ելլենք,
կոր, Աստուած իմ:

Չորս կողմէն «Պատուոյ ատեն» կը տե-
ղայ, հանրագրութիւն ամեն փողոցի մէջ,
ամենուն գրպանը, դա՛ւն. . . դոնէ տասնը-
եօթ հատ մը կայ հորիզոնին վրայ, կոիւ,
բանակոիւ, շուրի պէս ատու կը վազէ կոր
չորս կողմէն, իրեք, զայրոյթ, հայհոյանք,
ամենուն սրտին մէջ և շրթներուն վրայ.
Հնչակեանը մէկ կողմէն, Դրօշակեանը միւ-
սէն, երկուքն ալ «Միութիւն»ով ոսկեգօծ-
ուած, առաջ հայոց սրճարանը մէկ հատ
կար, հիմայ չորսը քիչ կուգայ կոր, չորս
կուսակցութիւն ալ ասոր երեսն. ալ հաշ-
ուեցէք. չի մոռնալ, երկու նոր կուսակցու-
թիւն ալ կամաց կամաց կ'սկսի կոր, Մաթո-
սեան պիկարէթ ծխողները և Միւրճեան
խմորները:

Իբրեւ թէ այս ամենը բաւական չէր, մէկ
մին ալ Քիւրդի կուսակցութիւն մը խրտուի
կ'սկսի:

Բարեբաղդաբար Եգիպտոսեանի Հայերը
մէկ կէտի վրայ իրարու համամիտ են . . .
«Փարոս»ը տուղ կը գտնեն. իրաւունք ու-
նին, էն պատուական Տ/ԱՂՈՒՄ գումարը 20
փարայ է:

Եւ ըսել թէ ուրիշ երկիրներու մէջ լրա-
գրագրութիւնը իրարու հետ կը մրցին, մինչ-
դեռ մենք հոս ստիպուած ենք մենկապաշտ-
ներուն հետ մրցելու. . .

— Ի՞նչ, աշխարհ, անանկ ֆիլիսթինա մը
կ'ըլլայ ի՞նչ, խաւսե՛մք տաս զրուշի պիկի
չի կրնան խմել, կը մոլտայ այս տողերս
շարող գրաշարը որ օղի խմելու սովորու-
թիւնը չունի. . . գաւաթով:

Մի ստիպէք զիս ուրիշն եթէ խմբագրա-
կան մը գրելու պատրասակին տակ խենդ ու
խելառ վիճիւններ չեմ արձակեր այս կամ
այն խնդրոյն վրայ առանց կանխաւ տակն
ու վրան լաւ մը քննելու, տեսալ մը սկըզ-
բունք է այս, եթէ կուգէք, որմէ մեծ
չեմ տեսած. . . կիններու վրայ յօդուած գրե-
լու սկսած օրէն ի վեր. կինները, այո՛, ու-
րոնք խնդիրներուն ամենէն ծանրն են. . .
եթէ երկինուն հարցնենք:

«Փարոս»ը մէկ օրուան համար շինուած
չէ, այդ խնդիրներով ալ գրադելու ժամանակ
ունինք, մաղթելով սակայն որ այդ ամենքն
ալ մէջտեղէն վերնան և կարգադրուին ա-
ռանց մեր խմբագրականներուն:

Եթէ ոչ խմբագրի բայց գոնէ ճշմարիտ
Հայու վայելուչ մաղթանք մը չէ՛ այս:

* * *

Բան մը պիտեցիք. ամբողջ քրօնիկիս
մէջ տող մը վրան ըսաց բան չկայ:

Ես դիտեցի կ'սկսեմ. հիմայ հասկցայ
թէ մարդ ըլլալու ճամբան բռնած եմ:

Եւ ես ձեզ կ'երթնում որ այսպէս պիտի
մնամ մինչև. . . եկող երեքշաբթի:

Յ. Ա.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Աւասիկ «Թան» ի Սեպտեմբեր
14 թիւին մէջ երեքստ խմբագրական-
ներ որուն թարգմանութիւնը խոստա-
ցած էինք մեր անցեալ թիւով:

Որքան որ այս յօդուածը պիտի իշ-
և յուսաւոր բան մը ունենայ իր մէջ,
պէտք չէ սակայն հնչուն գրաւի տեղ
առնել Յրանապական զգայութեան
այս բարեշնչումը՝ որ պարզապէս
արդիւնք է Կ. Պոլսոյ. . . քարտիկնե-
րուն ծանօթ խնդրոյն:

Կ. Պոլսէն՝ Սօֆիայի ճամբով մեր ստա-
ցած այն հետադիւր՝ զոր մեր երկի թուով
հրատարակեցինք, անշուշտ ոչ զոր գար-
մացոյց, ի բաց առեալ անոնք՝ որոնք լաւ
մը չեն հետեւած և կամ նախապաշարեալ
աչօք կը գիտեն Արեւելի մէջ անցած գար-
մածին: Օմանեան կայսրութեան մայրա-
քաղաքին մէջ, որ լուրերը այնքան դան-
դաղօրէն կը հասնին և նոյնքան զժողովու-
րէն տարածուին, քանի մ'օրէ ի վեր շատ
կը խօսուի այն ծանր դեպքերու մասին՝ ու-
րոնք տեղի ունեցած են Մուշի մէջ ներկայ
ամսոյս 1ին և 2ին:

Պիթիսի վայրէն հրաման ստացած է զկա-
քերուն վայրը փութալ, որովհետեւ Վանայ
լճին մօտ և Եփրատի եզերքին վրայ կա-
ռուցուած Մուշ քաղաքը իր վիճակի իշ-
խանութեան կը պատկանի: Սպարապետը
իր ետեւն ութ զուարթակի զինուոր ճամբայ
հանած է:

Բաւական է ասիկ վեց տարի առաջ
պատահած դեպքերուն վրայ յետագարձ ալ-
նարկ մը նետել, յիշել 1893 թնականը
և այն խուլ տարածախմբներն որոնք
Սասունի ահեղ ողբերգութեան սկզբնաւո-
րութիւնը կանխեցին, այս չարագուշակ տա-

րածախմբներուն տալու համար պէտք
եղած կարեւորութիւնը:

Հարկաւ, Բ. Դուրը և Երջալը պալա-
տը, հաւատարիմ իրենց ծնած հնարա-
միտութեան, կը ջանան հանրային կարծիքը
հանգրտեցնել, կը վստահեցնեն թէ խըն-
դիւրը պարզ կոտի մը վրայ է երկու ան-
հատներու մէջ տեղի ունեցած և ձեռք
կ'առնեն այն ամեն դատական ու անօրոյտ
միջոցները որոնք իրենց յանցանքը խոստ-
ովանիլ չուզող կատաղութիւններու յա-
տուկ են:

Բայց այս անգամ ոչ Երբոյական դահ-
լիները և ոչ ալ հանրային կարծիքը այդ
ծուղակին մէջ պիտի իյնան:

Տակաւին նոր է՝ մօտ անցեալի մը մէջ
անոնց ձեռք անցուցած փորձառութիւնը,
հետեւաբար գիտեն թէ որքան հաւատք ըն-
ծայելու է Սուլթանին և իր արքանականի-
րուն յայտարարութեանց:

Դեղին և Կապույտ Տեսարանները, հակա-
ռակ իրենց պաշտօնական հրատարակիչնե-
րու հնարագիտութեան և ասոնց վաւերա-
կան քննութիւններուն ներշնչուած անդա-
մութեան, դարձեալ այդ տեսարաններ ինք-
նին ամեն հրապարակաստութիւններէ աւելի
անհերքելի յիշատակագրեր և ամենէն աւելի
ջանջախիչ ամբաստանագրեր կը մնան:

Եթէ Երբոյան՝ «Բարձր» ներքին նա-
խանէ և մրցոտութեան ջլատուած, չի կըր-
ցաւ դարման մը գտնել հայկական ջարդե-
րու արհեստահար գայթակալութեան և նոյն
խուլ — ինչ որ այսօր հաստատուած իր-
դութիւն մըն է — պէտք եղած միջոցները
ձեռք չառաւ այս ոճիրներու կրկնութիւնը
արգիլելու համար, գոնէ ներքին է յուսալ
թէ այն անգամ այլեւ թող չպիտի տայ որ
իր աչքին փաշի փշեն, և թէ որք ինքզնիւ
յատակօրէն պիտի տեսնէ ներկայ ժամաւ
տիրոյ վտանգը իր ամբողջ տարածութեան
մէջ և անշուշտ, սրտանց պիտի ուզէ թե-
թեցնել իր մասը այն պատասխանատու-
ութեանց, զորս, աւա՛ղ, չի կրնար իր վրա-
յէն նետել ամբողջովին:

Մուշէն եկած լուրերուն ծանրակշիռ հան-
գումանքը շատ աւելի կը սաստկանայ երբ
գիտուի թէ ասոնք ուրիշ այնորինակ կարգ
մը լուրերու հետ կը գուցապիտիւն, և ի
հանգէս կը բերեն ոչ թէ տեղական ունե-
խոտութեան մը պայթիւնը, այլ ընդարձակ
շարժում մը որք յառաջիկայացութիւնը և
անդամադրելի յորձանքի մը աներկայ յա-
ռաջողութիւնը:

Ամենէն աւելի ձեռնհաս, ամենէն աւելի
իրագրելի մարդիկ, ներկայ կացութիւնը ամ-
փութած են այն յիշատակագրի մէջ զոր ներ-

կայացուցին Եղևակոյի մէջ այժմ գումարուած Խաղաղասիրական Համաժողովին:

«Հայկական խնդիրը՝ արեւելեական խաղաղութեան տեսակետով» վերնագրին տակ երեցող այս յիշատակագիրը իր մէջ կը պարունակէ դէպքերուն մէկ կուտ պատմութիւնը և ասոնց խիտ օգտակարութիւնը և սա եզրակացութեան կը յանգի թէ «Ոչ միայն Պէրլինի գաշնադրութեան 64րդ. յօդուածի տրամադրած բարենորոգումները երբէք չեն գործադրուած» և ոչ իսկ գործադրութեան սկզբնաւորութիւն մը եղած է, թէ «Ոչ միայն 1895ի ապրիլ-մայիսի մէջ՝ մեծ պեւտութեանց զիտողագիրը, այսինքն քաղաքակրթեալ աշխարհին միահամուռ և հանդիսական ազդարարութիւնը Սուլթանին համար մեծեալ տառի տեղ անցած է, այլ պէտք է վախճալ թէ՛ անցեալ տարուան մասնակի ջարդերը ընդհանուր ջարդի մը շարունակ: Հիմնականօրէն կառավարութիւնը կը ջանայ բռնութեամբ ցրուել Զէյթունի և Սասունի մէջ գտնուած Հայերու համախումբութիւնը:

Զէյթունի մէջ նոր գործողներ կառուցուեցան և շատ մ'ամրոցներ բոլոր կիրճերուն և անցքներուն կը տիրեն:

Սասունի մէջ լեռնաքանի գիւղացի Հայերուն կ'ստիպեն իրենց բարձունքէն վար իջնել, դաշտին մէջ աւելի դիւրութեամբ զանոնք ջարդելու համար:

Ալանատեան վիաներու կողմէ «Բրո Արմենիա» ղրկուած թղթակցութիւնները, որոնք նահապետուած ազգի մը աղիողորմ ճիշերն են գոցեա, պերճախօս միօրինակութեամբ շարունակ մանրակրկիտ տեղեկութիւններ կուտան այդ անհաւասար կոիւնքերու զարձակներուն վրայ:

Այսօր՝ ինչպէս ամեն անկողնակալ դիտողները կը խոստովանին, իրաց վիճակը այն է ինչ որ՝ էր 1894ին: Միայն սա անբերութեամբ որ այն ատեն ջարդերը՝ կատարուելէն ետքը իմացուեցան, նոյեմբեր ամսուն, մինչդեռ հիմա, տակաւին մահացու հարուածը չէ տրուած, այդ տակաւին գործը գետ սկսուած չէ, հետեալաբար միջոց կայ ազգուսպէն միջամտելու ատենց առաջը անհերք համար:

Սասունը պաշարման վիճակի մէջ գնելնին արդէն ոճիրին օկզբնաւորութեան մէկ յայտարար նշանն է: Մուշի զէպքերը՝ արեւմտեայ տառման առաջին արարուածն են: Զինուորական ոյժերու հոն զրկուիլը՝ երաշխաւորութիւն մ'ըլլալէ հետո, ընդհակառակը նոր վտանգ մը կ'սպառնայ Հայերուն զինին:

Ամեն որ կ'զգայ թէ հանդիսաւոր է վայր-

կեանք՝ այն դժբաղդ ժողովրդեան համար որ մահաբեր հարուածին կ'սպասէ. նոյնպէս այն մարդուն և կամ բէժիւնին համար որ ամբողջ մարդկութեան խղճմանը առ ոչ չինչ համարելու պատասխանատուութիւնը նորէն կ'ստանձնէ:

Վայրկեանը հանգիստաւոր է Երզնկայի և քաղաքակրթեալ կոչուած պետութիւններու համար, որոնք չեն կրնար ձեռքբերին լուալ թափուած այսքան արեւելին համար և որոնք առաջին ջարդերու միջոցին՝ մէջտեղ զրին սնանկութեան տեսարանը իրենց ներդաշնակութեան, և որոնք՝ ճիշտ այս ժամուն, ամեն միջոց ի ձեռին ունին այս ահուկ տեսարաններու առաջն առնելու և տալու Հայերուն տանելի վիճակ մը, երաշխաւորելով Թուրքիոյ անկախութիւնը և աշխարհի խաղաղութեան պահպանումը:

Պէտք է յուսալ թէ՛ վերջապէս Դիւանադիտութիւնը իր նուիրական պարտականութիւնը հասկնալու կարող պիտի ըլլայ և պէտք է մտաբերել թէ այս տեսակ վայրկեանները յետին աստիճանի կարճ են և վախճուի և որոնք թերեւ մէկ մ'ալ չ'են դառնար:

ՈՐԱՄԻՆԱՄ ԵՒ ԱՂԲԱՏԱՆԱՄ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ

ԽԱՌՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՑ

Ա. ՆԻՍՏԸ

Տեղւոյս Որբախնամ և Աղբատան խնամ ընկերութեանց խառն Յանձնաժողովոյ Դիւանը մեզի կը զրկէ հետեւեալ գրութիւնը հրատարակութեան խնդրանքով:

Ինչպէս յայտնի է, յիշեալ բոլոր ընկերութիւնները միասնալով այս տարուան փետրուար 28ին շքեղ ներկայացում մը տուին Օսմանի խորհրդական թատրոնին մէջ: Ամեն կողմանէ փափաք յայտնուեցաւ որ առ այս կազմուած խառն Յանձնաժողովոյ պաշտօնը մնայուն հանգամանք մը առնէ և այս Յանձնաժողովը միայն իրաւունք ունենայ հանրային ձեռնարկներ սարքելու և գումար գինքը նոյն ընկերութեանց և Պոլսոյ Աղբային պատրիարքարանի որբերու անտուկին մէջ հաստատապէս բաժնելու:

Հետեալաբար նոյն Յանձնաժողովոյ Դիւանէն անցեալ ամսոյ 8ին 23 համարով դիմում եղաւ վիճակիս բարեխնամ Առաջնորդ Սրբազան հօր և հաղորդուեցաւ ընկերութեանց մէջ այս առթիւ կնքուած պայմանագիրը և խնդրուեցաւ անոր վաւերացումը:

Նորին Դերապատուութիւնը բարեհաճեցաւ նոյն ամսոյ 14ին 122 համար պաշ-

տօնագրով վաւերացնել յիշեալ խնամագիրը և գործադրութիւնը յանձնարարել փետր. 27ի ներկայացումին համար կազմուած Յանձնաժողովոյ ատենապետ Տ. Նազարէթ Մ. Աղազարմի, որուն հրաւերին համաձայն նոր Յանձնաժողովը իր անդամիկ նիստը բացաւ այս ամսոյ մէկին:

Նոր Յանձնաժողովոյ անդամ ընտրուած էին՝

Աղբատան ընկերութեան՝

Տ. Խաչիկ Անդրէասեան և Տ. Յակոբ Քիւրճեան:

Վասպուրականի Որբախնամ ընկերութեան՝

Տ. Երուանդ Աւագեան և Տ. Տիգրան Պոստագեան:

Հոգատարի Որբախնամ ընկերութեան՝

Տ. Մարտիկ Բրուտեան և Տ. Նապարէթ Աղազարմի:

Որբախից ընկերութեան կողմանէ՝

Տ. Առաքել Պէրպլեան և Տ. Կարապետ Վարդանեան:

Սիւսիսի Որբախնամ ընկերութեան՝

Տ. Առաքել Էլիփան և Տ. Սրապիս Սարգիսեան:

Ալիսայ Որբախնամ ընկերութեան՝

Տ. Խաչիկ Պէրպլեան և Տ. Սարգիս Թաթարեան:

Ասոնցմէ ներկայ էին տալը անգամներ. կատարուեցան գաղտնի բուհարկութեամբ և բացարձակ մեծամասնութեամբ՝ Դիւանի, Գանձապետի և Հաշուակալի ընտրութիւնները:

Տ. Նազարէթ Աղազարմ Ատենապետ

Տ. Սրապիս Սարգիսեան Ատենապետ

Տ. Առաքել Պէրպլեան Գանձապետ

Տ. Մարտիկ Բրուտեան Հաշուակալ

Յանձնաժողովը յետոյ ի նկատի առաւ ձիւպութիւն Տ. Սարգիս Թէրզեանի վասպուրականի Որբախնամի և Արաբքիւր Հոգատարին ուղղած 11 Օգոստոս թուականաւ պատասխանագիրը և կցեալ ցուցակը՝ Յիշեալ երկու ընկերութեանց Գործ. Ժողովները ամիսներ առաջ խնդրած էին որ Տ. Թէրզեան բարեհաճի ձիւպութիւն և շրջակայից մէջ հանգանակութիւն մը բնել ի նըպաստ իրենց: Տ. Թէրզեան պատասխանելով այս անգամ զրկած է առ Տ. Նազարէթ Աղազարմ 750 ֆրանք. 500ը անձնական նուիրատուութիւն և 250ը հանգանակութեան արդիւնք, յանձնարարելով որ իր նուիրած 500 ֆրանքէն 250 ֆրանքը Արաբքիւր որբանոցին զրկուի Արթ. Տ. Եղիսիկ հօր միջոցաւ, 50 ֆրանքը Որբախից տրուի իբր գրքի գին և մնացեալ 200

անխոսով երեւոյթի մը տակ ծածկելով իր մատղաշ սրտին արիւնոտ վերքը և ցաւը զոր կզգար լքանելուն համար երեք սիրունիկ հոգեհատորները, Սիւզիթը, Մարթը և Ուրնէն, իր պաշտելի ընդերը որ ծնողաց մահուամբ իրեն իսկ զաւակները եղած էին, որանց համար առ ոչինչ պիտի զրէր պանդխտութեան տառապանքները և ծառայութեան նուաստացումները:

— Գնա, աղջիկս, բռնած էր մեծաւորուհին, Աստուած պահպանէ բեգի և վերտոյն հոս դարձունէ. յիշէ որ այս բնակութիւնը բոլոր բնակութիւնից է միշտ, և թէ անոր դուռները միշտ բաց պիտի մնան թու առջեւ: Գալէ կեանքին մէջ, առանց ետեղ նայելու, շիտակ ճամբաւ գնա, աշխու և նպատակը, խորհուրդներդ նոյն իրական են, յառաջ տար զանոնք անբերկիւղ և անպեղծ: Դարձիբ հոս, պայծառ հոգեով, բարձր ի գլուխ, անբեծ ու պարզահոգի ինչպէս երբ հոսկէ կը

ֆրանքը միացուելով հանգանակեալ 250 ֆրանքին հետ յանձնուի վասպուրականի Որբախնամին և Արաբքիւր Հոգատարին: Կնքուած վերոյիշեալ պայմանագրի համաձայն հանգանակեալ 250 ֆրանքը հարկ էր խառն Յանձնաժողովոյ անտուկին յանձնել, գալով անձնական Եւէր 200 ֆրանքին, որոշուեցաւ զրկել աշխու նուիրատուին, անոր հաղորդել Որբախնամ ընկերութեանց հանրային ձեռնարկներու մէջ միացած ըլլալը և խնդրել որ հաւանութիւն առջայդ պատմարը ևս խառն Յանձնաժողովոյ անտուկին յանձնուի համար:

Յիշեալ 750 ֆրանքէն 250 ֆրանքը արդէն յանձնուած է Արթ. Տ. Եղիսիկ քահանային, Արաբքիւր Որբանոցը զրկուի համար. մնացեալ 500 ֆրանքը կը մնայ Տ. Նազարէթ Աղազարմի բով իրաւունք ունեցողներուն տրամադրութեան տակ:

«Գննական պատմութիւն Արշակ Բ. ի և անոր Պապ որդւոյն» անուն գրքէն 180 օրինակ վասպուրականի Որբախնամին տրամադրութեան տակ գրուած էր, հատը 8 զրէ. ողջէն ծախելու և 3 զրէ իր անտուկին համար վար գնելու պայմանով. յիշեալ ընկերութիւնը նոյն օրինակները և անոնց վաճառումէն գոյանալիք շահը խառն Յանձնաժողովը թողած ըլլալով, Յանձնաժողովը գոհունակութեամբ ընդունեց 180 օրինակները և որոշեց անոր իր միջոցաւ վաճառումը վերոյիշեալ պայմանով:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԺՄԱՐՎԵՆ

— Պալէն՝ Հոովմի մէջ հրատարակուող Թիւրքումու լրագրին կը հեռագրեն թէ՛ Զուլեյքիւր մէջ գիրք մը հրատարակուած է որ Պ. Քոնստանտին և Սուլթանի միջև պատահած գծաւթեանց ծագումը և պատմութիւնը կ'ընէ:

Այս գիրքը որմէ շատ մը օրինակներ տպուած է, ամբողջ գիւնարագիտական մարմնոյն ղրկուած է:

Թիւրքումու թղթակցէն լրագրին նայելով՝ Սուլթանին հրամանով հրատարակութեան տրուած է յիշեալ գիրքը:

— Սեպտեմբեր 13ին Ֆրանսայի Արտաքին գործոց նախարարը՝ Պ. Տէրբաւ, ընդունած է Բրո Արմենիոյ խմբագրապետը՝ Պ. Բիւր Բիւրեան որ իրեն յանձնած է Դրոշակեան կուսակցութեան կողմէ բոլոր՝ Հայաստանի մէջ մոլոցելիք բարեփոխութեանց ծրագիր մը: Պ. Բ. Բիւրեան

մեկնիւ, ու բոլոր ընդերքերը մէջ պիտի զբոսնէ՝ այլևս ոչ թէ այսօրուան մատաղ աղջիկները, այլ կիներ, աշխու երիտասարդուհիներ, որոնց գործը և բարութիւնը մէկ օրուան մէջ պիտի վարձատրեն զքեզ այսօրուան թու վիշտերու փոխարէն:

Երբ այս կարճատեւ ճառը աւարտեց, բարի մայրապետը յիշեց որ վանքին բարեպաշտական գործերուն շատ ջերմեանովութեամբ յարած տիկին մը, ան ալ ճիշտ այն միջոցին Մարտիկա կը մեկնէր. իսկոյն միտքը եկաւ որ Ժերմէնը անոր յանձնէ:

Արդարեւ այս պաշտպանութեան ներքեւ կատարեց դեռահասակ աղջիկը իր ճամբորդութեան առաջին մասը: Հարուստ կալուածատէրի մը այրին էր ասի, տարօրինակ կին մը որ իր ժամանակը կը բաժնէր եկեղեցիներուն ու իր պարտականութիւն միջև, որոց մշակութիւնը ինքը կը վարէր գուրգուրանքով:

ԹԵՐԹՈՆ «ՓԱՐՈՍ»-Ի (2)

ԺԵՂԱՆ ՏԻՎՐԷՅ

ԲՐԷՆԱ ՄՈՒՐԱՏ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԲԱՐՔԵՆԻ ՆԵՐՇԵՁՈՒԱԾ ՎԷՊ

ԳԼՈՒԽ Ա.

Յրանսացի ճարտարագետ մը, որուն ջուրը Տօքթօրին աղշկանը ընկերուհին եղած էր, և որ Բրէնա Մուրատի բով պաշտօն կը վարէր, ութէն տասը տարեկան երկու սիրուն աղջիկներ եղող Անիկա և Ֆաթմա ծաղկատի հանմանուն զատիարակութեան համար՝ ակնաւոր և լուրջ երիտասարդ վարժուհի մը կը խնդրէր մեծաւորուհիէն: Պայմանները այնչափ շահաւոր էին, ու երիտասարդին խոստումները այն-

Տ Ե Ղ Ա Ն Ա Ն

Նախարարին ուղարկվելու հրահրած է մանուակի՝ թե մի գուցե նոր կոտորածներ տեղի ունենան Զեյթունի, Սասունի, Մուշի և Տիգրանակերտի մէջ. հակառակ պարագային արևմտյան կողմեր կրնան պատահիլ եթէ Հայոց կացութեան դարման մը չարքուռի:

— Պուլիարիոյ արտաքին գործոց նախարարը՝ Պ. Տանէֆ, շրջաբերական մը զրկած է Եւրոպայի բոլոր դիւանագիտական գործակալութեանց ու թուրքիոյ քաղաքներուն մէջ գտնուող բոլոր պուլիար աստուրական-գործակատարներուն, որուն մէջ կ'ըսէ թէ իշխանին կառավարութիւնը Մալեգանական գոմիթին օրէնքի հակառակ եզող ո'ւ է մէկ արարքին երբեք չ'պիտի ներէ, ու շատ խիստ կերպով պիտի վարուի Տէրօրիզմի և խռովարարութեան պէմ: Կառավարութիւնը ասով իր թուրքիոյ մէջ ունեցած շահերը կ'ուզէ պաշտպանել:

— Պոլսէն թալլովի կը հեռագրեն թէ թուրքիոյ նախարարաց ժողովին մէջ, խորհրդականներէն մին Շէյխ-Իւ-Իսլամի որդին՝ խիստ կերպով բողոքած է Սուլթանին պէմ, բրիտանաց ժողովրդեան օգտակար լինելու մէկ առիթը կորսնցուցած ըլլալուն համար և արդի կառավարչական դրութեան պէմ, յայտարարելով որ երկիրը և կայսրութիւնը աւերի կը մատնէ: «Գիտեմ, յարած է Շէյխ-Իւ-Իսլամի որդին, թէ այս խօսքերս Սուլթանին պիտի ըսեն, բայց հոգ չ'է, որովհետեւ պատրաստ եմ նոյն իսկ Սուլթանին երեսին ըսելու:»

— Ռուսական կառավարութիւնը մէկ ամիս զգարման դատապարտել է Նովոռոսի թերթը, թուրքիոյ որդոյն մէկ նամակը հրատարակած ըլլալուն համար:

— Բ. Դուրը՝ Ֆրանսայի և թուրքիոյ միջև դիւանագիտական յարաբերութեանց խզումը չ'զիտնալ կեղծելով, պալատան արարողականներէն Մուսթաֆա Միւնիր պէյը Ֆրանսական դեսպանատունը զրկած է դեսպանական խորհրդակցանք հրաւիրելու համար ճաշի մը որ Սուլթանը այդ օրը կուտար իր երեք աղջիկներուն հարսներին առթիւ:

Խորհրդականը բացարձակապէս մերժած է այդ հրաւերը:

— Պէրլինէ կիւմսնեն թէ Բ. Դուրը դիտաւորութիւն ունի կարմիր ծովու մէջ գտնուող Ֆարալան կղզիներու խռմբը վարձու տալ Գերմանիոյ. «Ֆարալան» անօդանոսը իրեն ծովային միջնորդ կը ծառայէր Գերմանիոյ շոգենականներուն:

Ամբողջ ճամբուն միջոցին, ժերմէն հարկադրուեցաւ նեղուիլ անոր շաղկապաւորութիւններէն և տարօրինակ հարցումներէն ուրոնց հազիւ թէ կը պատասխանէր. ուստի ճշմարիտ սփոխանք մը զգաց, երբ ինքզինքը մինակ գտաւ համեստ պանդոկի մը սենեակին մէջ:

Այդ վերջին գիշերը ժերմէն նամակ գրելով անցուց իր եղբորը և երեք փոքրիկ թոքերուն, մտքովը դեռ անոնց հետ ապրելով, ջանալով զրոյցել իր սրտին մէջ այդ սիրեցեալ պատկերները զոր գուցէ ժամանակը պիտի նոսնայանք իր յիշողութեանը մէջ, մտքին առջև կը բերէր անոնց դիմադրիքը, այդ սիրեցեալ պէմքերէն իւրաքանչիւրին յատուկ իրեր, մանրամասնութիւններ, այդ գէմքերը որ կարծես թէ արդէն կ'սկսէին խուսափիլ իրմէ, այնչափ անհասարակ է մեր յիշողութիւնը եթէ իր:

Իսեղծ աղջիկը, իր միամիտ գիւցազնու-

րտ յորտգոյն տեղեկութեանց, Ն. Բ. Խըրտիւր երկուշաբթի կամ երեքշաբթի օր ճամբայ պիտի ելլէ «Մահրուսա» զբօսանաւով:

— Ներքին գործոց նախարարութիւնը արտօնած է Տէսուքի տօնաւաճառը կատարել յառաջիկայ Նոյեմբեր 4էն 11:

— Վիճակահանութեանց սիրահարներուն կազմարարները թէ ուղարկութիւն ընելու են բրոմէաներ ծախու առած միջոցնուն:

Երէկ բողոք մը ներկայացուած է տեղական դատարաններու, ինքզինքը սեղանաւորի տեղ դնող մէկու մը դէմ, որուն հրապարակ հանած բրոմէաներու 200ին վրայ 35 հատը կեղծ գտնուած է, անոնց վրայ գնելով թիւեր որոնք արդէն անօրթի եղած են:

Բիւրամիս տեղական իշխանութեան ուղարկութիւնը հրաւիրէ այս կարգի խարդախութիւններու առաջը առնելու համար:

— Երկուշաբթի Հրեաներու մեծ տօնին առթիւ, Հրեաներու վաճառատունները և շատ մը զրամատուններ փակ պիտի մնան:

— Անգղիոյ դիւանագիտական գործակալը՝ Սըր Ռոբինէ Լիտոն՝ Սան Սթէֆանօն Գահիրէ եկած է:

— Երուսաղէմ ուխտի գնացող 300 Ֆրանսացի ուխտաւորներ Գահիրէ եկած են:

— Այս առաւօտ Պուլարի Անգղիական Եկեղեցւոյն մէջ հանդէս մը կատարուեցաւ Մաք Քիւնլիի յիշատակին: Այդ արարողութեան ներկայ էր Միացեալ-Նահանգաց հիւպատոսը:

— Ժանտախտը, ամառուան հետ, անհետանալու վրայ է: Վերջացող 24 ժամուան մէջ որ և է դէպք չէ պատահած ամբողջ Եգիպտոսի մէջ:

— Տեղական վճարեկատուները ցկեան տաժանակիր աշխատութեան դատապարտեց Ասիւթի Ամերիկեան վարժարանի աշակերտներէն Շալապի Ասատ անուն իսպաի մը, որ իր մօր քեռորդին սպաննոմ էր ամենի հարուածով մը:

Թեանը մէջ, դեռ ժամանակ չէր ունեցած խորհրդածելու մինչև այն վայրկեանը, չըղային գերագրգռութիւնը յորում կարգի երկու ամիսէ ի վեր՝ իր անձնուրիշեան վեհ կողմը, անխորհրդածու մեծութիւնը միայն ցոյց տուած էր իրեն. անտարակոյս դեռ մինչև այսօր ալ զոհաբերութեան հաստատամտօրէն պատրաստ էր. բայց երբ տեսաւ այն նաւը որ զինքը պիտի առնէր տանէր և զոր սաստիկ ծիպանք մը նաւահանգստին մէջ իսկ կը տատանէր, երբ տեսաւ այդ դէպքով ընտանեկան աղիւսման ընթացքը, բոլոր այդ մարդիկ որոնցմէ մէկ քանին կուլային, այդ պղնձադոյն նաւակները՝ սրոց դէմքին վրայէն անցած էր մէկէ քիչ կարծես ամէն երկիրներուն առեգակէն, կեանքի տխուր ու ցուրտ տափակութեան հանդէպ՝ իր զոհաբերութիւնը շատ կակմաղին երեցաւ իրեն:

Ինքը, շոյուած զգուած մանուկը,

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԵՐԷԿԻ ՀԵՌԱԳՐԵՐ

Փարիզ. 19 Սեպտ. — Չարը և Պ. Լուպէ երկի իրիկուն Գոմիթէյն հասան: Լրագիրները՝ Պ. Լուպէի առ Չարն ուղարկած խօսքերը մեկնելով, կրնան թէ այս այցելութիւնը մասնաւորապէս Ֆրանսական բանակին և նաւատորմի շնորհած է, որոնց երկուքն ալ Հանրապետութեան անգաղար հողածութեան առարկայ եղած են: Երէկ խանկարութիւնը կը ցուցնէ թէ երկու ազգերու զաջնակցութիւնը իր հրապոյրէն բան մը չէ կորսնցուցած յաշու զովոյեան:

Պ. Կոնստանտին, Լը Լիպէնքէն լրագրին հրատարակելը, բանաւարակեցաւ, իր ընթերցողները Չարին պէմ զրպոյց յօդուածներ հրատարակած ըլլալուն համար: Մահրիս. 19 Սեպտ. — Մարտի Սուլթանը 10,000 զինուոր զրկեց Սպանիացի զինուորուն օգնութեան հասնելու համար: Չորսվար վէլլէր Արիիկէ ուղղեւ Լորեան:

(ՌԻԻԹԵՐ)

Բարիզ 19 Սեպտ. — Ռուս վեհապետներ և Հասարակագիտութեան նախագահը Ռէյնի գագաթ և ուղղմամբ ձգելու վերջին օրուն ներկայ գտնուած են, Եւրոպայի զարգացողութեան Պալատը ու Մայր եկեղեցին այցելած են:

Նախաճաշի միջոցին Չարը գոհունակութիւն յայտնած է Ֆրանսական բանակին կոտորելու գործերու առթիւսին իր հասած ընկալուն համար:

(ՀՈՎԱՍ)

Տիւրքիա. 19 Սեպտ. — 2000 Պէրլին տարիներէ կան հոս որ իրենց տարագրութեան կ'ուզան, «Նախալ վարժիկները» ինքի կ'անշուած են արշաւանքի մի պարտ: Գային պատրաստ ըլլալու համար:

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ ՀԵՌԱԳՐԵՐ

Պէրլին. 20 Սեպտ. — Կայսրը կարմիր Արծիւ Պատուանշանին մեծ խաչը նուիրեց Շիւն իշխանին:

Օրթալի. 20 Սեպտ. — Քորնվալիսի դուքսը և զբոսահին հոս հասան:

(ՌԻԻԹԵՐ)

Գոմիթէյն. 20 Սեպտ. — Ռուս վեհապետներ օր մը ամբողջ հանգիստ ըրին: Երեկոյեան ներկայ գտնուեցան ճաշի մը որու հրաւիրուած էին բազմաթիւ բարձրաստիճանի անձնուրիշները:

Չարը մեծ գոհունակութիւն ցոյց տուաւ:

(ՀՈՎԱՍ)

ՎՐԻՊԱԿ

Մեր Ա. Թիւով «Ռ. Յ. Պէրլին» վերջնադրով յաջողութիւն մէջ զրաշարունակ սխալ մը սպրդած է. այդ յօդուածի չորս տխուր վարէն սկսելով 10րդ սողին մէջ վրոքիւն խառը կարգաւ մեծութիւն:

Վայրկեաններով ապրող զրգասուն ծաղկատի աղջիկը, ինքը որ մայրենի սրտկապանէն ելած չեղած՝ Աստուծոյն խաղաղաւտ մեծարանները միայն տեսած էր, պիտի պարտաւորուէր միս մինակ՝ ամէն խրատ տուէ, ամէն բարեկամէ հեռու՝ կատարել կեանքի այդ դժգոյս աշխատութիւնը, որուն վրայ գաղափար անգամ չունէր իր ութնատասնամեայ հասակը:

Իր երկրէն այնչափ տարբեր երկրի մը մէջ, պիտի ստիպուէր հրաժարիլ իր սովորութիւններէն, իր ճաշակներէն, գուցէ իր ամենէն ներքին, ամենէն գաղտնի զգացումներուն մէջ պիտի վերադարձուէր, պիտի նուաւտանար:

Երբ շոգենաւը ծովուն բացը ելաւ, փութորիկ մը ծագեցաւ:

Ժերմէն, ծովախառ խորտակուած, իր ֆիզիկական ծայրայեղ խոնջութեանը մէջ մոռնալով իր վիշաքը, այլեւ չէր խորհէր,

ԱՂԵՔԱՆԴՐԻՈՅ ՍԱԿԱՐԱՆ ԱՐԺԵԹՈՒՂԹԻ

Աղեքսանդրիա, 20 սեպտ.

Բրի իլէթիէ	100 /—
Իւնիֆիէ	107 1/4
Տալիւա Սանիյէ	103 /—
Տօմանեալ	104 /—
Թրքական Բանաստիւտէ, սեղի Ը	26 70
Ռուսիէի Երկաթուղի	Քր. 103 1/2
Բանալ տը Սիւէզ	» 3745 /—
Բանալ տը Սիւէզ օպրիկ	» 640 /—
Նաւ. պանք օֆ Էճիպթ	Ա. Ռ. 11 5/16
Աղէքս. Թրամվէյ (Բրիվ.) Քր.	50 /—
Աղէքսանդրիոյ Թրամվէյ (աքսիօն տիվիտանա)	» 30 /—
Բրէտի ֆօնտիէ եւ. արսիօն	» 542 /—
Բրէտի ֆօնտիէ 3 0/0	» 264 1/2
Ջրի Բնկ. Գահիրէ	» 652 1/2
» Աղէքսանդրիա Ա. Ռ.	» 35 7/8
» Թանիթա	» 12 /—
Պէհէրայի անանուս ընկ.	» 49 /—
Իճիքլէն մարքէթի օպր. 5 0/0	» 100 /—
» » արսիօն	» 0. 15.—
» օպր. ընտ աստա	» 0. 16.—
Նուսկի լիւ Օթէլի	» 4. /—

ԲԱՄՊԱԿ ԵՒ ԱՐՄՏԻԲ

ՔՕՆԴՐԱ

Աղեքսանդրիա, 20 սեպտ.

Բամպակ. Նոյ. Թալի.	10 1/32 — /—
» Յունի. »	10 1/32 — 1/16
» Մարտ	10 1/8 — /—
Պիպէ. Նոյ. Դեկ. Յուն.	» 62 3/4 — /—
» փետ. մարտ	» 63 15/40 — /—
Բակլա. սեպ. հոկտ.	» 91 1/4 — /—
» Նոյ. Դեկ. յվ.	» 93 3/4 95 /—

ԿԱՐԵՒՈՐ ԱՁԴ

Թերթիս Աղեքսանդրիոյ գործակալութիւնը Տիւրք Լեւոն Նիզամեան ստանձնած ըլլալով, բաժանորդագրութեան և ծանուցմանց համար դիմել իր վաճառատնէն՝ Թէվֆիք փաշա փողոց:

ԱՁԴ

Տիւրք Գէորգ ԵԿԱԹՅ պատիւ ունի ծանուցանել թէ իր ապահովագրական գրասենեակը առժամապէս փոխադրած է «Մուշուլ Լայֆ» ընկերութեան Ընդհ. ներկայացուցչութեան յատուկ առարկութեան մէջ, իսմայիլիյէ Թաղը, Ֆրանսական Ընդհ. հիւպատոսարանի ճիշտ դէմը, Շաւարպի փաշայի ապարանքը:

այլեւ չէր ապրէր, բացարձակ կ'ընտանութեան մէջ իր բովանդակ եւութեամբ ինկած, ինքնին կը հարցնէր թէ բոլոր իր տառապանքները, իր համայն որոշումները, իր արարատութիւնը չ'պիտի յանգէին արգեօք աննշան, անփառունակ վախճանի մը՝ այդ ծովուն մէջ ալ աւելի աճելի քան այն Ռոնը որ իրենները կորուսած էին:

Ե. զինքը ընկնող այդ ծայրայեղ սրտաբեկութեան մէջ, տեսաւ մը անզգայութիւն կ'ըմբռնէր զինքը, խորին կըտում մը, որ զինքը անշարժ իր մը, անսարմին հօգի մը կը զարձակէր:

— Արգեօք մենիմ պիտի, կը մըմնէր, արգեօք մենիմ պիտի:

(Շարունակելի) Թարգմ. Յ. ՍԵԹԵԱՆ

Գ. ԵՒ Կ. ՄԵԼՔՈՆԵԱՆ

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՌԵԹՆԵՐՈՒ

ԳԱՀԻՔ, ԳՈՐԾԱՐԱՆ ԹԵՎՅԻՔԻՑԷ — ԳԼԽԱԽՈՐ ՎԱՃԱՌԱՏԵՂԻ ՆԱԽԻՆ ԶԱԲԻՔԻՑԻ ՇԵՆՔ

Մ Ո Ւ Ջ Ո Ւ Ա Ն Լ Ա Յ Ց

ԱՊՍԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՆԻՒԵՐՈՒԹԻ
ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿԵՆԱՑ ԱՊՍԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՑԵԱԼ 1843 ՎՅ

ՊԱՆԿՈՍԻ ԳՈՒՄԱՐ ՄԵ՛կ ՄԻԼԻՈՒ 563 ՄԻԼԻՈՆ 961 ՀԱՋԱՐ ՖՐԱՆԿ

Ապահովագրական ամեն կարելի դրուբիւնները կը գո ծաղրէ. խառն ապահովագրութիւն, ամբողջ կեանք, զաւակայ դրամագլուխ, ցման եկամուտ, եւայլն

ՄՈՒՋՈՒԱՆ ԼԱՅՑԻ սակագինը և ապահովագրութեան վանազանը գրութիւնները չուսումնասիրած մի՛ ապահովագրուիր. — Առատ և ճշուն պայմաններ
Տեղեկութեանց համար գիմել ի Գահիրէ առ Պ. Ն. ԲԻՐՉԻՍ և Ժ. ՎԱԼՖԻՇ, Ընդհ. Ներկայաշրջիչը,
Աղբքանդրիա Անթ. Թ. ՌԱԼԻ, գլխաւոր գործակալուար. Գ. ԵԿԱՒՈՅ Դեր-Գործակալ ի Գահիրէ

ԳՐԷՏԻ ԼԻՕՆԷ

ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԴՐԱՄԱԿԼՈՒԻ 200,000,000 ՖՐԱՆԿ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ Յ ԵԳԻՊՏՈՍ
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ-ԳԱՀԻՐԷ ԲՈՌ-ՍԱՅԻՏ

ԳՐԷՏԻ ԼԻՕՆԷՆ կ'ստանձնէ ամեն տեսակ սեղանաւորական գործուրութիւններ, ինչպէս փոխառութիւն արժէքաւոր թուղթերու վրայ:
Ընթացիկ հաշիւներ կը բանայ արժէքաւոր աւանդներու վրայ:
Ֆրանսայի և օտար երկիրներու վրայ կուտայ չէքեր, փոխանակագրեր, և վարկագրեր:
Կը գանձէ եգիպտոսի և արտասահմանի վրայ քաշուած փոխանակագրեր:
Աւանդ ձգուած գրամներուն փոխարէն կանխորոշ պայմանաժամով մուհակներ կուտայ:

ԽՏԻՎԱԿԱՆ ՇՈԳԵՆԱԻԱՅԻՆ ԸՆԿ.

ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԵՒ Կ. ՊՕԼՍՈՅ ՄԻՋԵԻ
ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՇՈԳԵՆԱԻԵՐՈՎ

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԻՔԻՈՅ ԳԻԾ

ԵԱԲԱԹԱԿԱՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ
ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն շաբաթը ի օր ժամը 4ին (յ. մ.) գէպի Բիրեա, Իզմիր, Միսիլի և Կ. Պոլիս:
ԺԱՄԱՆՈՒՄ. — Միկնոյն նաւահանգիստներէն ժամանում յԱղբքանդրիա ամեն Շաբաթ օր, առաւօտեան ժամը 7ին:
ԾԱՆՈԹ. — Ճամբորդները բաւական ժամանակ կ'ունենան շոգեխանները Բիրեա հանդիպելուն, Աղբքանդրիա:

ՄՈՒՐԻՈՅ ԳԻԾ
ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն շաբաթ օր ժամը 4ին (յ. մ.) գէպի Բօռ-Սայիտ, Եաֆա, Հայֆա, Պէյրութ, Տրեպոլիս, Մերսին և Իսկէնտէրու:
ԺԱՄԱՆՈՒՄ. — Միկնոյն նաւահանգիստներէն ժամանում յԱղբքանդրիա ամեն Շաբաթը առաւօտեան ժամը 6ին:
Տասնընչինգ օրը անգամ մը՝ երթեկեկ կարմիր

Ծովու հետեւալ նաւահանգիստներու միջև.
Ճիճճէ, ՍՈՒՔԻՆ, ՀՕՏԷՑՏԱ, ԱՏԷՆ
Ճամբորդութեանց և ապրանց համար գիմել ընկերութեան Աղբքանդրիոյ, Բօռ-Սայիտի, Սիւէզի և Գահիրէի գործակալութեանց, ինչպէս նաև Գուրքի ամեն մասնաճիւղերուն:
1—1902

ԼԵԻՈՆ ԿԻՒՄԻՏԵԱՆ

—X—

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԺԱՄԱՅՈՑՅԻ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԷՆՆԵՐՈՒ
ԳԱՀԻՐԷ, Մուսի փողոց,
Օ. և Ս. Սիսնաիի վանառասան դէմը
Ապրանայ զանազանութիւն
Երաշխաւորութիւն
Աժանութիւն
Ճոխ հաւաքածոյ Ամերիկեան և Ֆրանսական
Ընծակրաֆներու
Ծանօթ: Վարպետ ժամագործ մը յաճախորդներու տրամադրութեան տակ կը գտնուի:
ԱՅՑԵԼԵՑԷՔ ԵՒ ԳՈՀ ՊԻՏԻ ՄՆԱՔ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԱՋԳԱՅԻՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Հաստատեալ խորվական հրամանագրով

25 Յունվար 1898


Դրամագլուխ Անգլ. ոսկի 1,500,000
Պահեստի դրամ " " 193,000
Կառավարիչ. Սըր Էլվին Բարմէր.

Ընկ. կեդրոն ի Գահիրէ: Մասնաճիւղեր.
Աղբքանդրիա, Մանսուրա, Խարթում:
Եգիպտական Ազգային Դրամատունը կընդունի աւանդներ, դրամ փոխ կուտայ և ընթացիկ հաշիւներ կը բանայ ապրանքի և արժէքաւոր թուղթերու վրայ:

Կը գնէ և կը վաճառէ արտասահմանի վրայ քաշուած փոխանակագրեր և կը ստանձնէ ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ.

Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆԻ ՄԷՋ

Կը տպուին ամեն լեզուէ հարստեկան հրաւիրագրեր, Տեղեկագրեր, նամակազլուխ, Գրքեր, Տոմար, Հաշուեցոյցեր, Մահազներ, Յայտարարութիւններ, Լայլն, Լայլն:
ԱժԱՆ ԳՆԵՐՈՎ



ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ ՓՈԹՈՎ ԿԸ ԿԱՏԱՐՈՒՆ
50 % ԿԱՆԻԿ ՎՃԱՐՆԵԼՈՎ

ԼՈՒՍԱՆԿԱՐՁԱՏՈՒՆ

ՍԷՏԷՖՃԵԱՆ

ՀԻՄՆԵԱՆ Ի Կ. ՊՕԼԻՍ 1882 թ

ՓՈԽԱՐԵՆԱԼ Ի ԳԱՀԻՐԷ 1898 թ

ԱԹԱՊԱ - ԷԼ - ԽԱՏՐԱ — ՊԱՋԱՐ-ՄՈՒՐՈՒՐ

Այս ծանօթ լուսանկարատան մէջ շատ խնամեալ և վերջին դրութեամբ կը պատրաստուին ամեն մեծութեամբ և ամեն տեսակ լուսանկարներ. կոշիկներ և ակրան-սխալմաններ:

Դուրսը առնուելիք լուսանկարներու համար գիւրաւ մատչելի պայմաններ:

ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՐԲՈՒԹԻՒՆ
ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՇԱԿ
ԳԻՆԵՐՈՒ ՋՓԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ՔԻՆԾԸԼ ԵՒ ՍԻՄՈՆԱ

Հաստատեալ յամին 1860

ՀԱՅԱԳՈՐԾԷ-ՀԱՅԹԱՅԹԻՉԷ Ն. Բ. ԽՏԻՎԻՆ

Այս նշանաւոր փուլին մէջ կը պատրաստուին ամեն տեսակ հացեր, պիւրիներ, եւ քէյթեր:

Այս փուլին մասնաւոր կառքեր կը շրջագային Գահիրէի ամեն թաղերու մէջ, ինչպէս նաև Զէյթուն և ի Հէյվան:

Թէվֆիգիյէ, Պուլաբի ճամբայ. ԳԱՀԻՐԷ
Թէվֆիգի թիւ 504.

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԴԱՄԱՅՈՑՅԻ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԷՆՆԵՐՈՒ

ԱՐ ՄԱՐԺ
ՄԵՑՄԵ
ԲԱՐԻՉ
1900

ՍՐԱՆՑ
ԿԻՆԵՐՈՒ
ԵՒ
ՏՂԱՅՈՑ ՀԱՄԱՐ
ՀԱՆԴԵՐՁՆԵՐ
ԸՍՏ ՎԵՐՋԻ ՆՈՐԱՅԵՐՈՒԹԵԱՆ
ՋԱՓԱԽՈՐ ԵՒ ՈՐՈՇԵԱԼ ԳԻՆԵՐ
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ — ԳԱՀԻՐԷ